



Արթուր Ռոբերտի ՊՈՂՈՍՅԱՆ

«Վարչական դատարանի դատավոր,

Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ավագ դասախոս,

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայեցակարգ

Վճռաբեկ դատարանի որոշ իրավագործությունների մասին

2012 թվականի հունիսի 11-ին «Վ փաստաբանների պալատի մի խումբ փաստաբաններ իրականացրեցին մեկօրյա «դատադուլ», որի առանցքում ընկած էր «Վ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքները վերադարձնելու վերաբերյալ որոշումների չպատճառաբանված լինելու հանգամանքը: Այդ միջոցառմանը հաջորդեցին Հանրապետության Նախագահի գլխավորությամբ 2012 թվականի հունիս և սեպտեմբեր ամիսներին անցկացված թվով երկու խորհրդակցություններ, որոնց մասնակցում էին նաև «Վ վճռաբեկ դատարանի և «Վ փաստաբանների պալատի նախագահները: Այդ խորհրդակցությունների ժամանակ տրվեց հանձնարարական՝ բնագավառը բարեփոխելու ուղղությամբ:

Ավելին, «Վ Նախագահի կողմից 2012 թվականի հունիսի 30-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությունը: Մասնավորապես, սույն կարգադրության 1-ին հավելվածի 7.1-7.1.3-րդ կետերը սահմանում են, որ «Դատավարական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է.

7.1. Իրականացնել վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

7.1.1. Ուսումնասիրել վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքի ընդունելիության օրենսդրական չափանիշների, բողոքի ընդունումը մերժելու վերաբերյալ որոշման բովանդակությանը ներկայացվող պահանջների հարցում միջազգային լավագույն փորձը և ըստ անհրաժեշտության նախապատրաստել վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակին համահունչ՝ վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրականացման ընթացակարգերի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ:

7.1.2. Տարանջատել և հստակեցնել վճռաբեկ բողոքին ներկայացվող ձևական (ֆորմալ) ու բովանդակային պահանջները, ինչպես նաև դրանք չպահպանելու հետևանքները:

7.1.3. Մշակել դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող այնպիսի պահանջներ, որոնք հնարավորություն կտան այլ դատական ակտերին հղում կատարելիս ապահովել տարբեր գործերի փաստական հանգամանքների համադրելիությունը:

Օրենքի միատեսակ կիրառության և մեկնաբանության ապահովման հարցում վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթների ապահովման և վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել լավագույն միջազգային փորձը՝ ըստ անհրաժեշտության իրականացնելով վճռաբեկ

բողոքարկման ինստիտուտի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ:

Գործող դատավարական օրենսգրքերում անհրաժեշտ է հստակեցնել վճռաբեկ բողոքին ներկայացվող չափանիշները՝ պարզելով, թե արդյոք դրանք ձևական (ֆորմալ) բնույթ ունեն, թե դրանց պետք է ներկայացվեն նաև բովանդակային պահանջներ:

Վերոհիշյալ խնդիրների լուծմանը կարող են օժանդակել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատական ակտերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, հատկապես նույնական փաստական հանգամանքներով այլ դատական ակտեր կայացնելիս, ինչպես նաև վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջների հստակեցումը, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների հրապարակումը:»:

Ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել իրավաբանական հանրությանը մեր տեսակետը՝ «Վճռաբեկ դատարանի որոշ իրավագործությունների ապագա բարեփոխման առնչությամբ:

Այսպես, «Վճռաբեկ օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-4-րդ մասերը սահմանում են, որ «1. Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Իր այդ առաքելությունն իրականացնելիս վճռաբեկ դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը:

2. Վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերանայում է վերաքննիչ դատարանների դատական ակտերը: Վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերի քննության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով:

3. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտը առերևույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին, կամ

3) ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, կամ

4) եթե առկա են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված:»:

Այս կապակցությամբ ուշագրավ է այն հանգամանքը, որ «Վարչական դատավարության օրենսգրքի /այսուհետ նաև՝ ՎԴՕ/ 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համանման դրույթը, ի տարբերություն «Վճռաբեկ օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, խմբագրված է այլ կերպ. «առկա է նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտում»:

«Վճռաբեկ օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ Վճռաբեկ դատարանի ակտերը ենթակա են պաշտոնական հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»:

Իր հերթին, «Վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված:

1. *Նախ և առաջ՝ գտնում ենք, որ «Վճռաբեկ դատարանը պետք է համապատասխան գործը ստանալուց հետո 15-օրյա, այլ ոչ թե գործող օրենսդրությամբ սահմանված մեկամսյա ժամկետում կայացնի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում բացառապես այն դեպքում, երբ բողոքաբերի կողմից չեն պահպանվել վճռաբեկ բողոքի բովանդակությանը ներկայացվող և գործող օրենսդրությամբ նախատեսված ձևական պահանջները: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՎԴՕ 118.5-րդ հոդվածով սահմանված, վճռաբեկ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջներին, ինչպես նաև ՎԴՕ 118.7-րդ հոդվածի 1-ին*

մասի 1-6-րդ կետերով նախատեսված հիմքերին: Իհարկե, վճարել բողոքը վերադարձնելիս դատարանը պետք է նշի այն ժամկետը, որի ընթացքում բողոքաբերը կարող է շտկել թերությունները և կրկին ներկայացնել բողոքը: Ինչ վերաբերում է ՎԴՕ 118.7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված հիմքին /բացակայում են ՎԴՕ 118.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վճարել բողոքը քննության ընդունելու հիմքերը/, ապա այս կետը նպատակահարմար է ճանաչել ուժը կորցրած: Այսինքն՝ վճարել դատարանը բողոքը վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցը քննության առնելիս չպետք է անդրադարձնա չ՛ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ և ՎԴՕ 118.8-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված, վճարել բողոքն ըստ էության քննության ընդունելու հիմքերի առկայությանը կամ բացակայությանը, քանի որ տվյալ փուլում քննարկվում է վճարել բողոքի ներկայացման ձևական /ֆորմալ/ պահանջների պահպանված լինելու կամ չլինելու հարցը:

2. Իսկ այն դեպքում, երբ վճարել բողոքում ձևակերպված են հիմնավորումներ, որոնք առնչվում են ստորադաս դատարանների կողմից օրենքի միատեսակ կիրառությանը, և/կամ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճարել դատարանի նախկինում ընդունած որոշումներին, և/կամ առկա է նյութական կամ դատավարական իրավունքի նորմի էական խախտում, և/կամ առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք, ապա տվյալ պարագայում, մեր կարծիքով, չ՛ վճարել դատարանն արդեն պարտավոր է վարույթ ընդունել վճարել բողոքը և այն ըստ էության քննության առնել: Այստեղ հաշվի ենք առնում նաև այն հանգամանքը, որ չ՛ Սահմանադրության 92-րդ հոդվածի ուժով Վճարել դատարանը դեռևս **ընդհանուր իրավասության** բարձրագույն դատական ատյան է:

Գտնում ենք նաև, որ չ՛ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ և ՎԴՕ 118.8-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված վճարել բողոքը քննության ընդունելու հիմքերը հստակեցման և կոնկրետացման կարիք են զգում՝ ապագայում տարրակերպ մեկնաբանություններից խուսափելու նպատակով:

Այսպես, օրենքի միատեսակ կիրառության տակ անհրաժեշտ է հասկանալ կիրառելի իրավական ակտի կոնկրետ դրույթի միանման մեկնաբանություն ստորադաս դատարանների կողմից, այլ ոչ թե օրենքի չ՛բացերի>> լրացում կամ չ՛նախադեպային իրավունքի>> տարրերի ներմուծում: Մեր կարծիքով, օրենքի միատեսակ կիրառության ապահովումը որևէ կապ չունի անգլոսաքսոնական իրավական համակարգեր կիրառող երկրներում ավանդաբար ընդունված նախադեպային իրավունքի հետ, քանի որ նախադեպային իրավունքի կանոնն է՝ չ՛լուծել այնպես, ինչպես լուծվել է նախկինում>>:

Այս առումով անվերապահորեն հստակեցման կարիք է զգում օրենքի միատեսակ կիրառության առաքելությունն իրականացնելիս Վճարել դատարանի կողմից իրավունքի զարգացմանը նպաստելու ձգտման առարկայական դրսևորումը: Մեր կարծիքով, այդ ձգտումն առաջին հերթին պետք է դրսևորվի Վճարել դատարանի կողմից նախկինում իր իսկ սեփական իրավական դիրքորոշումները վերանայելով և/կամ նորը ներկայացնելով:

Ինչ վերաբերում է վերանայվող դատական ակտի առերևույթ (prima facie) վճարել դատարանի նախկինում ընդունված որոշումներին հակասությանը, ապա այստեղ պետք է նշել, որ խոսքը կարող է վերաբերվել բացառապես Վճարել դատարանի նախկինում ընդունված որոշումներում ամրագրված օրենքի միատեսակ կիրառության /մեկնաբանության/ հարցերին, ինչը որևէ առնչություն չունի տարբեր գործերի փաստական հանգամանքների նույնանման կամ ոչ նույնանման լինելու հետ. օրենքը բոլոր դեպքերում պետք է մեկնաբանվի միակերպ՝ անկախ գործի փաստական հանգամանքների:

Ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտման առկայության մասով անհրաժեշտ է շեշտադրումը կատարել այն հանգամանքի վրա, որ դատական սխալն ուղղակիորեն հանգեցրել է վեճի ըստ էության սխալ լուծմանը, այլ ոչ թե, այսպես կոչված, չ՛ծանր հետևանքների>>, իսկ դատական սխալի առերևույթ /ակնհայտ/ լինելու կամ չլինելու հանգամանքն էական նշանակություն չի կարող ունենալ:

Ի վերջո՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով վճարել բողոքը քննության ընդունելը, չնայած չ՛ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.3-րդ բաժնին հղում պարունակելուն /ՎԴՕ 134-րդ հոդվածի 2-րդ մաս/, անհրաժեշտ է լրամշակել՝

հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի 28.09.2012 թվականի թիվ ՍԴՈ-1049 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները:

Ի դեպ, մեզ համար անհասկանալի է գործող օրենսդրության վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հիմքերում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտման առկայության նախատեսելը, եթե բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար կամ վերանայվող դատական ակտը առերևույթ (prima facie) չի հակասում վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին: Այսինքն՝ փաստացի ստացվում է, որ ստորադաս դատարանի կողմից գուտ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտումն իրենից ներկայացնում է վճռաբեկ բողոքը քննության ընդունելու ինքնուրույն /ավտոնոմ/ հիմք: Հետևաբար, այսօր էլ Վճռաբեկ դատարանը պարտավոր է միայն այս հիմքի առկայության պարագայում ընդունել վարույթ վճռաբեկ բողոքը, ինչը կարող է հակասել վերջինիս սահմանադրաիրավական կարգավիճակին ու առաքելությանը՝ ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը և իր այդ առաքելությունն իրականացնելիս ձգտել նպաստել իրավունքի զարգացմանը:

3. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելիս Վճռաբեկ դատարանը պարտավոր է որոշել, թե բողոքի ըստ էության քննությունն անցկացվելու է գրավոր կամ բանավոր ընթացակարգով: Բանավոր ընթացակարգով վճռաբեկ բողոքը քննության առնելիս դատավարության մասնակիցներին պետք է լիարժեք հնարավորություն ընձեռնվի դատական նիստի ընթացքում ներկայացնել տեսակետ կամ դիրքորոշում, միմյանց հարցեր ուղղել և այլն, այսինքն՝ անհրաժեշտ է ապահովել մրցակցային դատավարություն: Գրավոր ընթացակարգով բողոքի ըստ էության քննության դեպքում դատավարության մասնակիցներն իրազեկվում են միայն որոշման եզրափակիչ մասի հրապարակման ժամանակի և վայրի մասին, իսկ բանավոր ընթացակարգով բողոքի ըստ էության քննությունն ավարտելուց հետո տեղեկացվում է որոշման եզրափակիչ մասի հրապարակման ժամանակը և վայրը /ներկայումս Վճռաբեկ դատարանի պալատը հրապարակում է իր որոշումն անմիջապես կողմերին լսելուց հետո, իսկ կողմերի բացակայության դեպքում՝ չի հրապարակում/: Հետևաբար լիովին նորովի անհրաժեշտ է խմբագրել ու լրամշակել ՎԴՕ «Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքի նախապատրաստումը գործի քննությանը» վերտառությամբ 118.12-րդ և «Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը» վերտառությամբ 118.13-րդ հոդվածները:

4. Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ «1. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները կայացնում են որոշումներ, վճիռներ, դատավճիռներ և արձակում վճարման կարգադրություններ (այսուհետ՝ դատական ակտեր) միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում և սահմաններում:

2. Առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, գերատեսչական իրավական ակտերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին:

3. Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը և կարգադրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումները, գերատեսչական իրավական ակտերը և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրածների, ներքին և անհատական իրավական ակտերը չպետք է հակասեն օրինական ուժի մեջ մտած առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերին:»:

Այս կապակցությամբ ուշագրավ է այն հանգամանքը, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-3-րդ մասերը հակասում են միմյանց, քանի որ միաժամանակ սահմանված է դատական ակտերի հակասության անթույլատրելիությունը ՀՀ

օրենսդրության, գերատեսչական իրավական ակտերին, ինչպես նաև հակառակը՝ ՀՀ Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ վարչապետի որոշումների /վերջիններս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով ևս հանդիսանում են օրենսդրական ակտեր/, գերատեսչական իրավական ակտերի հակասության անթույլատրելիությունը դատական ակտերին: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի ուժով Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, այսինքն՝ բոլոր դատական ակտերը, այդ թվում՝ օրինական ուժի մեջ չմտած, չպետք է հակասեն միայն ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին /նաև Ազգային ժողովի վավերացրած ՀՀ միջազգային պայմանագրերին/, իսկ մնացած բոլոր իրավական ակտերը չպետք է հակասեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին: Հետևաբար, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-3-րդ մասերն ենթակա են նոր խմբագրության:

Գտնում ենք նաև, որ վճռաբեկ բողոքի ըստ էության քննության արդյունքում Վճռաբեկ դատարանն իրավասու է կայացնել երկու տեսակի որոշում՝ անհատական կամ նորմատիվ՝ համապատասխան «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին: ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը /պարտադիրությունը ստորադաս դատական ատյանների համար/ տարածելի է բացառապես նորմատիվ բնույթ կրող որոշումների վրա, իսկ նույն օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը /դատական ակտը որպես իրավական փաստարկ մատնանշելու իրավունքը/ տարածելի է անհատական բնույթ կրող որոշումների նկատմամբ: Վճռաբեկ դատարանի նորմատիվ բնույթ կրող որոշումները պետք է կայացվեն միայն այն դեպքում, երբ դրանք առնչվում են ստորադաս դատարանների կողմից օրենքի միատեսակ կիրառությանը և իրավունքի զարգացմանը /ըստ որում, տվյալ որոշումները միաժամանակ կարող են առնչվել այլ հարցերին/: Իսկ «ՀՀ պաշտոնական տեղեկագրում» հրապարակման ենթակա են միայն նորմատիվ բնույթ կրող որոշումները, մյուսները հրապարակվում են առնվազն `datalex.am` և դատական իշխանության նմանատիպ այլ պաշտոնական ինտերնետային կայքերում: Մնացած բոլոր դեպքերում կայացվում են անհատական բնույթ կրող որոշումներ, որոնք առնչվում են վերանայվող դատական ակտի վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին առերևույթ հակասությանը, և/կամ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի էական խախտմանը, և/կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքի առկայությանը: Վճռաբեկ դատարանի անհատական և նորմատիվ բնույթի որոշումները պետք է լինեն պատճառաբանված այն հաշվով, որ հիմնավորվի բողոքաբերի այս կամ այն փաստարկի, ինչպես նաև բողոքի պատասխանում տեղ գտած հակափաստարկի /սովորաբար Վճռաբեկ դատարանի որոշումների պատճառաբանական մասում բացակայում է անդրադարձ վճռաբեկ բողոքի պատասխանին/ իրավաչափությունը կամ ոչ իրավաչափ լինելու հանգամանքը: Այս առնչությամբ մեզ համար միանգամայն ընդունելի է Վճռաբեկ դատարանի այն պատճառաբանությունը, որը համընկնում է ստորադաս առաջին կամ վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը. խոսքը վերաբերում է, օրինակ, այն դեպքին, երբ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ բառացի մեջբերում է ստորադաս դատարանի իրավական դիրքորոշումը կամ հղում է կատարում դրան և իր համար համարում է այն ընդունելի ու իրավաչափ: